

ՎԵՐԱԾՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԱՄԵԱՅ ԽՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՊՈՐԵԱՅ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՐԵՑ

Ա. ՄՈՐՏՈՒՆԻ (Ա. Միասնիկեան)




ՃԻՐԱԿԻ ԶՐԱՆՑՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ԵՒ

ԻՆՉ ԿԱՏԱՐՈՒՄԾ Է ՄԻՆՉԵՒ ՀԻՄԱ

ԳՐԵՑ

Ա. ՅՈՎՈՒՔԵԱՆ



1924

ՏՊՈՎՐ. ԱՇԽԱՇԽԱՆ. ԵՎ. ԱՎԵՐ

0.0. ԵՐԱՄԵԱՅ ԽՈՐԴ.

9(47.925)

Մ-82

Զիալ «ուրի և ողբի» հայրենիքը

Կեցը՝ Մուրենի և Մանկաղի Շեմսող Հայաստանի

ԵՐԱՄԵԱՅ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՐԵԱՅ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Երեք տարի: Սա մեծ ժամանակամիջոց է յեղափոխական պատմա-
շրջանի համար: Եւ այդ երեք տարուայ ընթացքում գոնէ լուծուած է գլխա-
ւոր խնդիրը: Հայաստանի խորհրդայնացումը, կարելի է համարձակօրէն ասել,
վճռել է կամ վերացրել՝ այսպէս կոչուած: հայկական հարցը: Եւ նա մի բան
էլ աւելի է արել:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մենք շատ լաւ գիտենք, որ արտասահմանում պատսպարուած «մար-
տական կուսակցութեան» չարաբաստիկ զինակիրները պատրաստ են կոչելու.
«Ո՞չ, հայկական հարցը կայ, Թիւրքահայաստանի խնդիրը մնում է, իսկ Ռու-
սահայտուանը պէտք է որ ազատազրուի ուսական լծից»: Սովորական պըն-
դում, քանի որ այդ արւում է մարդկանց կողմից, որոնք ընդունակ չեն որեւէ
հարց լուծելու, և որոնց կողքով ծանրակշիռ խնդիրներն անցնում դնում են
և վճռուած պատմութեան անողոք լոժիքի հարուածների տակ: Եւ Հայա-
տանում ապրողն ու շրջագայողը աեսնում է, թէ ի՞նչ ապահով օրեր է ապ-
րում այդ երկրի չարատանջ աշխատաւորը, որի համար մի հարց է մնացել
միայն՝ բարեփոխել իր նիստն ու կացը, միանգամայն բարելաւել իր անտե-
սութիւնն ու կենցաղը: Մենք սովորութիւն չունենք դիմելու բուրժուաների
կողմից մեր հասցեին ուղղուած բարենպատա վկայութիւններին, դա «մարտա-
կան կուսակցութեան» վեշակն է, և հենց այդ պատճառավ էլ այսանդ ընդ-
գծում ենք այն, ինչ մեզ ասաց նորերս Հայաստանից արասահման վերա-
ցողարձող հայ գրամատէրներից մէկը՝ Կարիկեան: Վերջինս դանում է, որ
Հայաստանն արդէն թեւակոխել է երջանկութեան գարաշրջանը: Ինչո՞ւ է նա
այդպէս խօսում: Այն հասարակ ու պարզ պատճառով, որ նա աեսել է մեր
Հայաստանը:

Տաճկահայաստանի խնդիր: Այդ էլ է լուծուած: Նորից կը հայոյին
մեզ Դաշնակցականները: Այս, նա լուծուած է, և նրա դատավճիռը կը հանուի
մօտակայ տարիներում, քանի որ Տաճկաստանի գրութիւնն այս յեղափոխա-
կան շրջանում վերջնականապէս կ'որոշուի: Մերձաւոր Արեւելքի գրան

5174 4274



շեմքին կանգնած Խորհրդային կովկասն արդէն կանխորշում է արեւելեան ժողովուրդների և Մերձաւոր Արեւելքի բախտը : Մեղ համար դոյութիւն չունի և սահմանների հարցը, որովհետեւ ժողովուրդներ և երկիրներ յեղափոխականացնող խորհրդային իրաւակարգն այս դէպքում թերեւս համաձայն լինի հայկական հիմաւուրց ասացուածքին թէ՝ «ասհման քաջաց—զէն իւրեանց», քանի որ նրա գաղափարները համատարած են:

«ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎՏԱՆԳԸ»


Բայց կայ և մնում է «թիւրքական վտանգը» : Այդ մասին էլ են խօսում մեր աղքայնականները : Այդ բանին հակամէտ են հաւատալու նաև Հայաստանի աղքարնակչութեան որոշ խաւերը : Ամենայն պատասխանատուութեամբ և վստահութեամբ մենք պնդում ենք, որ այդ «վտանգը» չկայ, նոյն իսկ չնայած Երեւանեան այն «միջադէպին», որի առիթով Պոկի թրքական ու հայկական գեղին ու սպիտակ մամուն այնքան թմբուկ գարկեց վերջին ժամանակները: Եթէ մի խիստ աննշան դէպք, որի նմանները շատ-շատ են այս յեղափոխական օրերին, այն էլ խորհրդային երկիրների այսպէս ասած միշտ չաղքային պրակտիկայում, մի դէպք, որ ոչ մի արձագանգ չդուռ մեղանում, մի դէպք, որի հանդէպ ինքը, տաճկական կառավարութիւնը, անշուշտ կը պահպանի իր լիակատար լոյալութիւնը և բարի դրացիութիւնը Խորհրդային Հայաստանի և այլ խորհրդային երկիրների հետ, եթէ այդպիսի մի դէպք ընդունակ է աղմուկ բարձրացնելու, ապա պէտք է աւզզակի ասել, որ մարդիկ որոշել են պրովոկացիա սարքելու մեր գլխին: Իսկ մենք յիմարներ չենք: Պրովոկատորներին շատ լաւ ենք ճանաչում: Նրանց յոյց կտանք իրանց տեղը: Իսկական վտանգը պէտք է սպասել հայկական հակայեղափոխական Դաշնակցութեան և թրքական ոճագործ դաւադիրների բանակից: Նրանք վխտում են Պոլսի նեղ գողղոցներում: Մինչեռ նոր Տաճկատանի աշխատաւոր գիւղացիութիւնը և նրա տրամադրութեան հետ հաշուի նստող Անդորրայի կառավարութիւնը գիտեն, որ իրանց թեկունքը միանգամայն ապահովուած է չնորհիւ Խորհրդային Խուսաստանի ու կովկասի: Վերջիններս էլ չեն վախենում ոչ մի պրովոկացիայից, քանի որ նրանց յոյսը յեղափոխական աշխատաւորութիւնն է, կարմիր բանակն է, որ կոչուած է ամենուրեք խաղաղութիւնն ապահովելու, նրանց չեկաններն են, և Արեւելքի (ընդ ամին և Տաճկատանի) ժողովուրդների բուռն ցանկութիւնն է հաշտ ու խաղաղ ապրել սոցիալիստական յեղափոխաւթեան օճախների հետ:

Այդպէս ուրեմն, «Երեւանի միջադէպը» մի ցնդաբանութիւն է: Հայաստանն առաջուայ նման և էլ աւելի խաղաղ օրեր է ապրում: Այլ կերպ մտածողն ու խորհողը կամ պրովոկատոր է, կամ խենթ է, կամ մուլորուած:



ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Մնում է գաղթականութեան խնդիրը: Դաշնակցականները թուղթ ու մելան չեն խնայում «ապացուցանելու» համար, թէ արդի Հայաստանը հայ գաղթականներին հրաժարում է ընդունել: Նրանք սովորաբար ակնարկներ են անում Պարսկաստանի գաղթականութեան վերաբերմամբ: Պարսկաստանում մի ժամանակ գաղթականներ են եղել Դարբինեաններն, թէ Օհանջանեաններն եւ Վրացեանները, այսօր այնտեղ են այդ մարդկանց վարձկան ագենտները: Ի՞նչպէս էք հրամայում, պէտք էր և պէտք է արդեօք դրանց ընդունել: Ոչ մի դէպքում, մեր կարծիքով, նրանց չի կարելի «ընդունել» Հայաստան, որովհետեւ այդ մարդկանց նպատակն է կուինների ու սրածութեան վայր զարձնել Խորհրդային Հայաստանը: Թող փորձեն: Իսկ մենք նըրանց թալանի ու աւերածութեան արդ ասպետներին խաղաղութեան անկիւն չենք յատկացնել մեր երկրում: Մնացեալ խաղաղ ու հալալ գաղթականութիւնը վաղուց հետէ անցել է Հայաստան: Վերջին ժամանակներս վերադարձել են նախկին դաշնակցական զինուորներից ու սպաններից հարսւաւոր մարդիկ, որոնք արդէն հակացել են իրանց մոլորութիւնը: Միջագետքից հազարներով և այլ վայրերից մեծ խմբերով Տաճնեակ հազարից անց է նրանց



Ա. ՄԻԱՍՆԻԿԵԱՆ

Փոխանականի

Անդրկովկասեան Համադաշնակցութեան

գաղթականներ են անցել Հայաստան: Թիւը:

Այսօր Պոլտում սպասում է տամնեակ հազարաւոր հայ գաղթականութիւն, որին մենք յայտարարում ենք, որ հնարաւորութիւն ունենք ընդունելու և տեղաւորելու Հայաստանում ու Կովկասում: Բայց արտասահմանում ևս կայ հարիւր հազարաւոր գաղթականութիւն: Ի՞նչ անել նրա վերաբեր-

մամբ : Հայաստանը շատ հող չունի : Նա ոռպում է իր անջրդի տափարակները : Դա արևում է և դաղթականութեան համար : Բացի այդ, Խորհրդային Հայաստանի կայունութիւնն Արեւելքում արգեն առհաւատչեայ է այն բանի , որ գաղթականութիւնը վաղ թէ ուշ հնարաւորութիւն պիտի ունենայ իր համար մի տեղ գտնելու : Դաշնակցականները կուռելով Հայաստանի դէմ կոփւ են մղում գաղթականութեան դէմ, որովհետեւ նրանք վասն են հասցընում մեր գործի յաջող ելքին : Այս տեսակէտից ոչ մի միտք չունին դաշնակցականների կանչվասոցները, որ բարձրացնում են նրանք գաղթականական հարցի չուրջը : Դա լոկ խեղկատակութիւն է, շաղախւած պրովակացիայով սուտով ու անմտութեամբ :

Նրանք հակայեղափոխական ու հակաշխատաւորական պրապագմանդա են մղում նաև գաղթականութեան մեծածաւալ շարքերում : Պոլսի «Ճաշկատամարտ» թերթը Բուլգարիայի, Ամերիկայի, Յունաստանի հայ գաղթականներին խորհուրդ է տալիս «Հսաբուել» բոլշեվիկներից, հեռու կենալ յեղափոխական վարդապետութիւնից, իրանց երկիրների աշխատաւորութիւնից ու բանւորութիւնից և զրանով «հայի նամուսն» աղատել պղծութիւնից : Եթէ հայ գաղթականութիւնը հետեւէր զրան, այն ժամանակ նա խաչ քաշած կը լիներ իր ներկայի և իր ողջ ապագայի վրայ : Հայ գաղթականութեան ազատագրումը հենց այն յեղափոխական պայքարի մէջն է, որ նա մղելու է իր կողքը տալով Եւրոպայի ու Ամերիկայի աշխատաւորութեան կողքին : Օրինակը կայ : Դա Ամերիկայի հայ բանւորութեան ճիշդ գիծն է, որ նա երեւան է հանել՝ ստեղծելով հայ բանւորական կազմակերպութիւն Ամերիկայում : Եթէ դուք ուզում էք Հայաստանի զօրացումը, որով նա հնարաւորութիւն կ'ունենայ նորանոր գաղթականներ ընդունելու, եթէ դուք ուզում էք մի անգամ ընդ միշտ աղատել մնանկութիւնից, թշուառութիւնից ու չարքաշ զրութիւնից, դուք, հայ գաղթականներդ, որոնց թիւը հարիւր հաղարներով է հաշւում, ապա վանեցէք ձեզանից հակաժողովրդական ու մարդարաւ դաշնակցականներին, որոնք մասն ունին ձեր դժբախտութեամ մէջ, և փարուեցէք արդի յեղափոխական շարժմանը . միացած ձեր երկիրների աշխատաւորներին՝ քանզեցէք նրանց հետ միասին կապիտալիզմի, արեան, թշուառութեան ու կին աշխարհի հիմքերը :

Եւ զա հեշտ է անել այսօր, որովհետեւ հին աշխարհը ծւատում է յեղափոխական շարժման հարուածներից, որի պատճառով էլ հենց քայլքայւում, տարրալուծում և տակն ու զրա են լինում անցեալ կեանքի պաշտպան կանգնած կուսակցութիւնները : Այս երկու հանգամանքը հեշտացնում է և Խորհրդային Հայաստանի պայքարն ու աշխատանքը :



ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐՀԱՍԸ

Երկրորդ հանգամանքը, դա Դաշնակցութեան անկումն է : Հայաստանի դաշնակցականները իկվեղացիայի ենթարկեցին իրանց կազմակերպութիւնները : Նրանցից առաջ Դրօն ու ընկերներն իրանց յայտագրով մասնկ յայտարարեցին Դաշնակցութեան անցեալն ու նրա քաղաքականութիւնը, չնայած որ դաշնակցական թերթերն ու «Հ. Յ. Դաշնակցութեան արտասահմանի պատասխանատու մարմնի» պատասխանը այլ բան են պնդում . «Վրաստանի Կենտրոնական Կոմիտէի անդամները մէկ տարիէ աւելի ձէմալ փաշայի սպանութեանէն ի վեր բանատարկւած կը մնային Մետեխի բերդին մէջ, բոլորվին կտրւած էին արտագին աշխարհէն և յայտագիրն ստորագրած են բանատին մէջ, առանց զուրափի ընկերներու և մարմիններու հետ խորհրդակցելու և անոնց համաձայնութիւնն առնելու» : Բանից դուքս է գալիս, որ միտիքական «պատասխանատու մարմինն» իր ընկերներին միանդամայն նսեմացնում է համարելով նրանց վախկաններ ու մորթեպաշտներ, թէկ, պէտք է ասած, որ յայտագիրն ստորագրել են նրանք Թիֆլիսում, իրանց բնակարաններում . իսկ Դրօն նոյն խիլ այդ ակտի համար, իր ու իրայինների ձեռքով գրուած յայտագրի պատճէնը գրամանում, ձեւընթացով Մոսկվայից համում է Թիֆլիս, այն Մոսկվայից, որտեղ նա ազատօրէն պարագում է իր անձնական տնտեսական գործերով : Մոսկվամ է արտասահմանեան Դաշնակցութիւնը, որ իր վերջին օրերն է ապրում : Ճիշտ է նա գեռ ունի օրապահուատ, հրատարակում է իր թերթերը, և այնտեղ ինչ որ «Թէորիաններ» են թիսում նրա տեսաբանները, բայց այդ ամէնը հայ ազգայնական ինտելիգենցիայի կամ հայ վարժապետութեան վերջին շունչն է : Վարժապետ «Թէորիետիկուններն» իրանց կուսակցութեան գագաղի մեխերն են խփում և իրանք էլ պատրաստուում են այնտեղ տեղաւորուելու : Մասսանները նրանցից հեռանում են : Արտասահմաննեան խարուած հայ գաղթականները նմանապէս հրաժարում են Դաշնակցութիւնից : Նրա վաղեմի լրականներից մէկը՝ Զալիսուշեան, իր դամբանականը նոր միայն վերջացրեց, որն ուզզուած է Դաշնակցութեան հասցէին : Աւելի խիստ մեղագրական է կարգում այսօր Դաշնակցութեան սիւներից մէկը՝ Քաջազնունին, որ նորերս լոյս տեսած իր գրքովկում, քննադատելով Դաշնակցութեան քաղաքականութիւնն ու էութիւնը, եւնելով արդի Հայաստանին ամէն կերպ օգնելու տեսակէտից, այսպիսի ծանրակշիռ ու սպանիչ վճիռ է հանում իր կուսակցութեանը . «Ի՞նչ անել ուրեմն : Ահա այսուեղ է, որ պիտի տաեմ այն շատ ծանր խօսքը, որ զիսեմ՝ վրտովեցնելու է ձեղ (այսինքն՝ դաշնակցականներին . — Ա. Մ.), բայց որ պէտք է տառի վերջապէս և ասուի պարզօրէն, առանց քող սրկումների և մեղմացումների . Հ. Յ. Դաշնակցութիւնը անելի չունի այնեւս» :

Խորհրդային Հայաստանն այդ խօսքը վաղուց է ասել : Շատ լաւ, եթէ այն կրկնում են այսօր թունդ գաշնակցականները, շատ վատ, եթէ հակառակն են պնդում գաշնակցական ջոջները : Բայց զիսաւորն այն է, որ այդ վճիռն են հանում և գաշնակցական մասսանները : Իրանով նրանք թեթեւացնում են մեր ընդհանուր գործը : Այժմ դառնանք այդ գործին :

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Երեք տարի անցաւ այն օրւանից, Հայաստան սկզբում միանդամայն մեկուսացած էր Անցեալ տարի Վրաստանի ու Աղբքեջանի հետ միասին նա կազմեց Կովկասեան Ֆեղերացիան, որն այս տարի մտաւ Համախորհրդային Միութեան ծոցը: Այդպիսով Հայաստանը կազմեց Խորհրդային երկիրների միացեալ բանակի մի մասնիկը: Այս առիթով հայ վարժապետները հարայ-հրոց են բարձրացնում, թէ Հայաստանը կորցրեց իր անկախութիւնը, թէ նրանում տիրապետողը ուռական ուուին է:

Ի՞նչ է պետական անկախութիւնը: Արդեօք Հայաստանն անկախ եղել է Դաշնակցականների տիրապետութեան օրով: Ո՞չ, որովհետեւ Հայաստան կոչւած վայրում տիրապը եղել է անգլիացին, իսկ նրան արտաքսելուց յիտոյ՝ թուրքը: Միմիայն հայ աշխատաւորութեան բմբոստացումն ու ոռուսական կարմիր բանակի օգնութիւնը հարաւորութիւն տվին հայ աշխատաւորին ազատ շունչ քաշելու: Այժմ Հայաստանը ուռու բանորի, վրացի և աղրբեջանցի գիւղացու բարեկամն է: Ի՞նչ կայ այստեղ խորշելու: Դրանով մենք պարծենում ենք: Այսօր Հայաստանում շատ աւելի գիւրին և ազատ են շրջագայութիւնը, աշխատանքը և զարգացումը: Լեզուն ու մշակոյթը աւելի բարձր դրութիւնն աճի են, քան առաջ: Մարդկային անհատականութիւնն, արժանապատութիւնն աւելի յարգի են, քան գաշնակցականների օրով էր: Զեայ վարժապետականութիւն, սեմինարիզմ, մարդասեցութիւն, ստորաքարչութիւն, սրածութիւն, լաց ու շիւմն Ռւբեմն հարցն ինչո՞ւմն է: Հա, մի բան էլ է պակասում այսօր կապիտալի շահագործումը: Դաշնակցականները Հայաստանը տանում էին դէպի կապիտալիստական դժոխքը. նրանք լծել էին կապիտալին, այսինքն ամերիկացուն, անգլիացուն, հայ վաճառականին ու սպեկուլամստին: Այսօր այլ է պատկերը: Այն ժամանակ էլ կար պետութիւն, այժմ էլ: Նա էլ իրան անկախ էր համարում, սա էլ անկախ է: Ո՞րն է ընտրում ժողովուրդը, ո՞րն է աւելի լաւ: Համեմատեցէք ու կ'ըմբռնէք: Իսկ անկախութեան մասին գրածները գաշնակցական «Հայրենիք»ի էջերում ոչ այլ ինչ են, եթէ ոչ սոսկ աճպարառութիւն ու տիմար խարերացութիւն:


ԱՇԽԱՏԱԽՈՐԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Այս երեք տարիների գլխաւոր արժանիքներից են պրոլետարական ու աշխատաւորական տարրերի համերաշխութեան գաղափարը, ազգային համերաշխութեան քարոզն ու զործը: Դրանց արդիւնքները շատ խոշոր են: Շնորհիւ գրանց է, որ Հայաստան օրէցօր յառաջադիմում է: Խորհրդային Միութիւնն ու Կովկասեան ֆեղերացիան մեծապէս զարկ տվին Հայաստանի բարգաւաճան գործին: Ազատուած և ինքնուրոյն Հայաստանը ոչ թէ յետազիմում է, ոչ թէ կանգնած է մի մակարդակի վրայ, այլ շարժում է, առաջ է գնում,

ուժեղապէս: Բայց դեռ ինչքան աշխատանք կայ կատարելու: Մենք որքան առաջդիմում ենք, այնքան էլ մեծ ուշադրութիւն ենք դարձնում մեր պակասներին, երեւան ենք հանում մեր խոցերը և նրանց բաժելու միջացներ ենք որոնում: Իսկ պահանջներ, կարկատաններ ու ձեզքուածքներ կան ու կան: Ահա սա է, որ լուծում է այսօրւայ Հայաստանը: Այլ հարցեր չկան, այս խնդիրներն են, առօրեայ պակասներն են ծառանում մեր առաջ: Դա մեր լին է, լուր օւերը, դառնանք նրանց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ, ՄԱԿԱՐԴԱԿԸ

Հայաստանի ընդհանուր մշակութային մակարդակը, անշուշտ, բարձրանում է: Ամենից առաջ կենդանանում են քաղաքները, թէև այս ընտագաւառում գեւեւս շատ մեծ աշխատանք կայ կատարելու: Սակայն առանց գիւղի ոչնչ չի կարելի անել մեր երկրում, քանի որ նա գերազանցապէս գիւղացիական վայր է: Մինչդեռ գիւղը տակաբին ծանր օրեր է ապրում: Ահա այդ գիւղն ըստ ընկ: Մ. Բագրատունու նկարագրութեան (տես «Ասրհրդագալին Հայաստան», № 223, 1923 թ.):



ԼՈՒԿԱՉԻՆ (Ս. Մրապինեան)
(Խ. Հայաստանի Գործակաբերի Խորհրդի նախագահ)

րից գուրս են քարձրանում որպէս ծխի քուլաներ: Դրանք Աքարյանի գիւղերն են, որոնք իրանց բնակալայրերի տեսքով, ճաշակով ու կուլտուրայով դեռ ապրում են քսենոֆոնեան դարերում:

Ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ այսաեղ մարդկային մտքի և առաջադիմութեան էվոլյուցիան դադարել է առաջ շարժել, սայլը կոտրել ու անպէս կանգնել մնացել է դարերի ընթացքում:

Աքարյանը մեկուսացած, դրսի աշխարհից կտրուած, ոչ մի հոսանք, սթափեցուցիչ թարմ օդ չի մտել այդտեղ: Դիւղացիութեան մտաւոր զարգացման աստիճանը որոշում է նրա կեանքի, կենցաղավարութեան, տնտեսութեան յետամասաց վիճակը, շրջապատող առարկաները, տան ներսի կահաւորութիւնը, հողէ կծուճ-քժութը, դգալը, ամանեղէնները, տան սիւները, ճրագը, ճրագկալը ձեզ յիշեցնում են անդրմիջնադարեան կաւէ դարաշրջանները, ամէն ինչ հասարակ քարէ, հող և ծխից ու մրից սեւացած կոշտ ու կուպիտ տաշած փայտ:

ՄԱՀՈՒԱՆ ԿՈՒԻ ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Այդպէս է հայ գիւղը շատ տեղերում՝ խաւար գետնափոր, յետ ընկած, տպէտ ու աղքատ, նամանաւանդ գետնափոր: Դա տգիտութեան և աղքատութեան լուռ արձանն է. աղաղակող յիշատակը: Մահուան կոիւ պէտք է յայտարարել այդ գետնափորութեան դէմ: Մեր կարծիքով դրա համար պէտք է գիւղացուն սրակել նախ՝ դրագիտութեան, երկորդ՝ նախաձեռնութեան և երրորդ՝ ինքնունութեան շինուկներ:

Մեծ ցաւը նրանումն է, որ հայ գիւղացին տպէտ է, մտաւորապէս խաւար: Եթէ գիւղացին տպէտ է, ապա դա կրկնակի պատուհաս է, որովհետեւ գիւղացին իր տնտեսական վիճակով անշարժ է, պահպանողական ու բժացած: Այստեղից մեկներով՝ պէտք է ամէն ջանք թափել գիւղացուն լուսաւորելու համար: Խորհրդային կարգերը թոյլ են տալիս մեր գիւղացուն զարգանալու: Փոխանակ գնալու և կապիտալիզմի գիրկն ընկնելու, գիւղացին այսօր գիմում է դէպի սոցիալիզմ: Սակայն առանց հողը լաւ մշակելու, առանց հացի ու հանգստի՝ չկայ սոցիալիզմ: Հողը լաւ մշակել, պատշաճ հագուստով ման գալ և կուշտ ապրել կարող է նաև ով ունի գիր, ունի վարժ ու թափանցող միտք, ով իր նիստուկացի մէջ գիտէ կիրառել կեանքի ու զարգացման գոնէ ամենակարեւոր և շատ ընդհանուր օրէնքները կամ կանոնները: Մեր գիւղացին չի ընտելացած դրան: այդ պատճառով էլ նա խեղճ է, յետամաս ու աղքատ:

Քանդեցէ՛ք այդ գետնափոր տները: Տուէ՛ք գիւղացուն հագուստ, վառելանիւթ և աղ: Սա է օրուայ պահանջման թայց ամենից առաջ, եթէ ուզում էք: տուէ՛ք նրան ուսում, գիտութիւն: Ժողովրդական կուսաւորութեան կոմիտարիատի առաջնակարգ գործն է ոչ թէ միայն Հայաստանում, այլև կովկասեան այլ համբարձետաւթիւններում և Ռուսաստանում, գրագիտութեան և

հանրային գիտելիքների տարածումը: Քաղաքին լուսաւորութիւնը պէտք է: Պէտք են այդ թանգարանները, թատրոններն ու համալսարանները, բայց աւելի մեծ անհրաժեշտութիւն է թանգարանը, թատրոնն ու համալսարանը գիւղում, որը գրագիտութիւն բառով է բնորոշում, առանց որի՝ չկայ գիւղ, չկայ գիւղացու բարեկեցութիւն, իսկ առանց վերջինիս՝ հնարաւոր չէ օրկանապէս խորհրդային շինարարութեամբ տարւել: Գրադիտութիւնը գուրս կը բերի հայ գիւղը, ինչպէս ընկ: Բագրատունին է որակում՝ նրա քսենոֆոնեան դարաշրջանից:

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ

Գիւղում լուսաւորութիւն տարածողը՝ պէտք է լինի ուսուցիչը: Դա սովետական ուսուցիչն է: Վարժապետների դարն անցաւ: Մեզ պէտք են յեղափոխական, աշխատաւորական ու մարդասէր ուսուցիչները: Նրանց թիւը շատ չէ: Պէտք է պատրաստել և արագ կերպով պատրաստել խորհրդային իշխանութեան այդ կարեւորագոյն աշխատակիցներին: Ուսուցիչն է որ երիտասարդութեան հետ միասին ստեղծելու և շնուելու է նոր գիւղը: Արդ սրանց նշանաբանն է լինելու՝ կեցցէ՛ գիւղական ուսուցիչը, դուքս բերենք մեր աշխատաւորութեան միջից հարիւրներով ու հազարներով ուսուցիչները: Սա շատ խոշոր հարց է, որ պէտք է լուծի կուսաւորութեան ժողովրդական կոմիտարիատը:

Այդ հարցն ունի և իր նիւթական կողմը: Մեր ուսուցիչներին անհրաժշտ է գուրս բերել նրանց վատթար, նրանց գոմիային դրութիւնից: Նման այն բանի, ինչպէս մենք ապահովում ենք մեր լաւադոյն աշխատողներին, հարկաւոր է նիւթական տանելի պայմանների մէջ դնել սւսուցչութիւնը թէ՛ գիւղում և թէ՛ քաղաքներում: Առանց այդ ապահովութեան մենք չենք ունենալ ո՛չ դպրոց, ո՛չ ուսում, ո՛չ էլ դասաստուների կազմ ու պատրաստ բանակ: Մեր կառավարութիւնն է, որ պէտք է դարձնի իր խորին ուշադրութիւնը արծարծածս կենսական ու ամենաառաջնակարգ խնդրին:

ՆԱԽԱԶԵՐՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ

Հայ գիւղը զուրկ է նախաձեռնութիւնից: Նախաձեռնութիւնը պակասում է այնտեղ, որտեղ չկայ գէմք, չկայ կորով, չկայ կամք: Դա յատուկ է գիւղացուն, աւաւել եւս հայ գիւղացուն՝ յետամասաց ու աղքատ այդ տարրին: Հայ գիւղացու դիմազրկութիւնը հեշտութեամբ կը վերանայ խորհրդային կարգերի օրով, եթէ միայն գիւղացին ունենայ ինքնագիտակցութիւն: Լուսաւորութիւնը մեծ զարկ է տալիս նախաձեռնութեան, առանց որի անհնար է դառնում անտեսական կեանքի զարգացումը: Մենք շատ լաւ դիտենք, ինչպէս ասացինք, որ գիւղն ու նախաձեռնութիւնը հակոտնեաներ են: Զեռներեցութիւնը յատուկ է արդի քաղաքին, հոսող և միաժամանակ առաջընթաց երեւոյթ կազմող կապիտալին, բուրժուական մասնաւոր սեփականութեան:


Բանն էլ հենց նրանումն է, որ մեր գիւղն առաջ ընթանայ նախկին կապիտալիզմի օրինակով հենց այս խնդրում՝ արագօքէն, ժիր և լի թափով։ Դրա նախապայմանն է գիւղացու արթուն ու խուզարկու միտքը, նրա նախաձեռնութիւնը իւրաքանչիւր բոպէ, ամէն բանում։ Եթէ սոցիալիզմը և խորհրդային կարգերը կարող են օգնութեան համեմ գիւղին ու գիւղացուն, ապա դա հնարաւոր է գիւղացու արթնացման և կայտառութեան գնող, անտեսական ու կուլտուրական կեանքում պրապաելու, վնասուելու, շարժւելու և առաջնորդական ձանապարհով։

ԻՆՔՆՈԳՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ

Պակասում է գիւղացուն և ինքնուգնութիւնը, որն անրաժան է նախաձեռնութիւնից։ Երկուսը միասին այն հակայական ուժն են կազմում, որը յեղաշրջելու է արդի գիւղը։ Ո՞րն է ինքնուգնութիւնն պակասը։ Բերենք օրինակ։ Փաւանները շրջելիս միշտ էլ մի երեւոյթ է աչքի դարնւում, դա — խելամբառութեան կամ ձիրքի կատարեալ բացակայութիւնն է։ Գիւղացին դարերից ի վեր գիտէ, օրինակ, մի ձեւով շնորհ իր տանը, փոս, քար, ցեխ ու փաած գերան։ ահա սա է նրա տունը։ Հնարել, ճարել ու դործածել այլ միջոց՝ նա չգիտէ։ Նայեցէք, օրինակ, Նոր Բայազիլի գաւառին։ Այնտեղ, նամանաւանդ Սեւանայ լճի ափերին մեծ քանակութեամբ բուռնում է եղէզը։ Մոլոկաններն օգագործում են այդ՝ տան կառերը ծածկելու համար։ Սկիքսանդրովկա գիւղի տները կարգին են։ Երանից մօտ երեք վերասի վրայ դանուել հայկական Ռախմանքենդ գիւղի տներն այլ պատկեր են ներկայացնում։ Ահա գիւղի մի թաղում գիւղացին իր փլած տունն է կարկատում։ Մանում ես ներուր, կտուրը բաց է, նա մնում է չաւարտուած, որովհետեւ տանտէրը փայտ չունի։ Իսկ Բայազիլի շրջանում փայտ ասածք չկայ։ Հապա ինչո՞ւ եղէզով չես ծածկում կտուրը, լնականորէն հարց ես ուզգում նրան և ցոյց տալիս մօտակայքում աճող եղեգը։ Գիւղացին քթի տակ ծիծաղում է։ Նրա կարծիքով եղեղը ոչ մի բանի պիտանի նիւթ չէ։ Մեր գիւղացին չի իմանում, թէ ինչ ամել է յատակն ու պատերը սուաղելը, այդ պատճառով էլ ձմեռը նրա տունը ցուրտ է, պատերից շարունակ թափթփում ու կաթում է, նրա սենեակն անհամբոյր է։ Այս ամէնը կարգի բերելու համար փող չի հարկաւոր։ Պէտք են միայն մի փոքրիկ աշխատանք, ձեռներէցութիւն և ըմբռնումն այն բանի, թէ առանց ինքնուգնութեան կամ եղած հում նիւթից մի բան ստեղծելու ինքնագիտակցութեան չկայ տանելի կեանք, չկայ յառաջիմութիւն։

Սրամիտ ընթերցողը մեր այս «քարոզը» կը համեմատէ երեւի անդամացի Սմայլսի բարոյախօսական գրուածքներին («ինքնուգնութիւն», «ինայութիւն», «Բնաւորութիւն», «Փարտք», «Խելք և էնորդիա» և այլն)։ Թողհամեմատի։ Միթէ սոցիալիստական կարգերը չեն զրագւում «մանր» խորհրներով։ Խորհրդացին իրաւակարգի առօրեան ու ընթացիկը՝ դա ինքը սոցիալիզմն է։ Մինչ պրոլետարական տերապետութեանն անարժէք են Սմայլսի բա-

րոյախօսականները։ Նրանք թերեւս լրացնում են քաղքենու կամ դրամատէր ու վաճառական դառնալ ձգտուրդը, և մի միայն այդքան։ Սոցիալիստական էպոփիան վտարում է մեշտանիզմը և բուրժուական բարոյականութիւնը։ Այն, ինչ որ ասացինք, եթէ սմայլսիզմ է, սակայն այսօրուայ,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

սոցիալիստական, պրոլետարական սմայլսիզմն է։ Տիրապետողը մեղանում աշխատաւորն է։ Եւ նա չինարարութեամբ է զրագւած։ Հայաստանի բանուորն ու աղքատ գիւղացին ամենից առաջ վերաշնելու են գիւղը, քանի որ նա

գիւղացիական Հայաստանի հիմքն է կազմում։ Այս տեսակէտից մեր գիւղը, ըստ այնմ և երկիրը, ընթանալու է գիւղատնտեսութեան զարգացման և լուսաւորութեան պատուատումի տղիներով։ Հողագործութեան և ժողովրդական կուսաւորութեան Կոմիսարիատներ՝ առա երկու գլխաւոր կէտեր, որոնց վրայ երկու ամուր ոտներով պէտք է կանգնած լինի Խորհրդային Հայաստանը։ Բայց այս հարցին մենք դեռ կը վերադառնանք։

ՆԱՅԱՍՏԱՆԸ ԳԻՒՂԱՏԵՍԵՍԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է

Այստեղ առաջ է գալիս և մի այլ խնդիր։ Դուք շարունակ գիւղից, զիւղատնտեսութիւնից էք խօսում, ուրեմն Հայաստանը սոսկ գիւղատնտեսական երկիր էք համարում։ Այո՛, կը պատասխանենք զրան։ Այս ո՛չ ֆիզիկատիզմ է, ո՛չ էլ Նալբանդեանի «Շրկրագործութիւնը»։ Առաջինը խոչոր բուրժուազիայի նախնական տնտեսագիտութիւնն է, երկրորդը «մանր մարդու», մանր սեփականատիրոջ ձգտումն է։ Սոցիալիզմը հեռու է թէ մէկից և թէ միւսից։ Նա վերցնում է երեւոյթներն այնպէս, ինչպէս նրանք կան։ Հայաստանը չունի գործարաններ։ Եթէ նրա հողերը ոսոգուեն, այն ժամանակնա կը լինի ըստ ամենայնի հարաւատ հողային երկիր։ Ճարտարարուեատի զարգացման համար ներկայումս հեռանկար չենք տեսնում Հայաստանում։ Բայց նա ունի բամբակ, խաղող, բրինձ, մետաքս և այլն։ Գիւղական բանաժամանակը կուլտուրաներ — սա է մեր երկիր հիմքը։ Բամբակի սերմ, խաղողի վազ և ջուր՝ սրանց գումարը մեզ կտայ հարուստ և ապահովուած Խորհրդային Հայաստան։

Սոցիալիզմը չի անջատում գիւղը քաղաքից։ Նա չի կարում ճարտարարուեատը գիւղատնտեսութիւնից։ Այս տեսակէտից մեր համար քննադատութեան չի դիմանաւմ ոչ ֆիզիոկրատիզմը, ոչ էլ Սիամոնդին կամ «Երկրագործութիւնը»։ Եթէ մենք կրկնում ենք այն միտքը, թէ Հայաստանը գիւղատնտեսական վայր է, զա ամենեւին էլ չի միտում այն միտքը թէ գիւղերը պէտք է շաղկապել քաղաքների հետ։ Գիւղատնտեսական Հայաստան և ինդուստրիել Բագու կամ ուսական շուկայ։ Այսպէս է այսօր։ Ապագայում կարող է լինել և հայկական արդիւնագործութիւն։ Մի խօսքով, ինչպէս էնդեմն էր ասում, սացիալիզմի օրով քաղաքն ու գիւղը մի մարմին են կազմում և վերանում է նրանց միջի խորհրդատք, նրանց այն անհարազատութիւնը, որն արգիւնք է կապիտալիստական կարգերի։

Բայց և կը բացականչեն՝ «ինչպէս է որ գիւղացիական երկրում պրոլետարական գիւղատնտեսութիւն ունի»։ Մենք էլ կը հարցնենք. Ի՞ր և ո՞րտեղ է ասուած, թէ գիւղատնտեսական երկիրներում սոցիալիզմ չի լինի։ Բնդիակառակն, մարքսիզմը միշտ էլ սւսուցանել է, որ գիւղացիական վայրերը սոցիալիստական յեղափոխութեան միջոցին օժանդակութիւն և օգնութիւն կը ստանան առաջնակարգ ճարտարարուեատական ու բանտորական երկիրների կողմից։

ԳԻՒՂԱ ՊԵՏՔ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ

Այժմ վերադառնանք Հողագործութեան Կոմիսարիատին, որին, ինչպէս երեւում է, վիճակւած է խոչոր գեր կատարելու Հայաստանում։ Նա է Հայաստանի ողջ տնտեսութեան, նրա հարատութիւնների ու նրա նիսթական շնարարութեան զեկավարը։ Նրա օրգանները տեղերում ամենաազգեցիկ, ամենամարտական և ամենաածեռներէց միւտորները պէտք է լինեն։ Նրանք սերտ կերպով պէտք է կապուեն գիւղացուն, նրա նիստ ու կացին։ Մենք գիւղը լաւ չենք իմանում և պէտք է ասած, որ տեղեակ չենք նրա անձուարձին, սովորոյթներին, նրա կարողութեան։ Գիւղը պէտք է ճանաչել և հասկանալ նրան։ Պէտք է տեղեակ լինել նրա անցեալին, ներկային։ Նրա կենցաղին։ Այդ պատճառով էլ պէտք է սերտ կապ պահել գիւղի հետ։

Շատ անդամ է աչքաթող արւել գիւղը։ Իշխանութեան գոկուսը կենարոնում է։ Խոչոր ու պատասխանատու աշխատողները մայրաքաղաքում են ապրում, զրադւած իրանց առօրեայ գործունէութեամբ և նրանք դժւարանում են գիւղ անցնել։ Եռյնիսկ գաւառական գործադիր կոմիտէների անդամներն են գիւղը հետո աշխատակիցները մշտնշենական յարաբերութեան մէջ չեն գիւղի հետ կենարոնը, որի աշխատանքը և առանձնասենեակը պարփակում են ամենայն իսկ իսկական կենարոնը, գիւղը յաճախ վերջին շարքն է քաշում։ Սա ինչ, իսկ իսկական կենարոնը, գիւղը յաճախ վերջին շարքն է քաշում։ Սա պէտք է մոռանալ։ Մրա զէմ պէտք է կուել։ Այն շարժումը, որին ընտեպէտք չէ մոռանալ։ Մրա զէմ պէտք է կուել։ Այն շարժումը, ամենից առաջ պահանջուող կապ գիւղի և բառել մենք ինքներս։ Անխողիի և անընդհատ պահպանուող կապ գիւղի և կենարոնական խորհրդային իշխանութեան միջև, պատասխանատու ընկերների փոխադրութիւնը գիւղ՝ այստեղ աշխատելու, գիւղացուն շարժելու և գիւղը վերաշինելու նպատակով — սա ընթացիկ, կարեւորագոյն հարցերից մէկն է։ Վիւղի հեռանկարը, նրա առաջնակարգ լինելը ոչ մի գէպօւմ, ոչ մի ժամանակի մեջ կամ առաջնակարգ լինելը ու գործութիւնը։ Մեր կառավարութիւնը, որպէս նաև պէտք չէ վրիպի մեր ուսադրութիւնը։ Մեր կառավարութիւնը, որպէս արթուն հոկիչ, աշխատում է և էլ առելի ջանք կը թափէ այդ ուղղութեամբ։ արթուն հոկիչ, աշխատում է ուղղութեամբ։

ԿՈՌՊԵՐԱՑԻԱՆ

Գիւղատնտեսութիւնն ու գիւղը բարձրացնելու նպատակին են ծառայում և այլ պայմաններ։ դրանք երկուն են՝ կոռպերացիան և կոմմունիստական երկտասարդութիւնը (Կոմսոմոլը)։ Կոռպերացիայի մասին շատ է խօսւած, ական երկտասարդութիւնը (Կոմսոմոլը)։ Գիւղացիական կամ առաջնակարգ լինելը առաջ բառ և անկանոն հասարակական մարմին, առանց հրամանի և առանց ի վերուստ զրած հրանամկների կազմակերպում է տնտեսութիւնը, ամենից առաջ մարմին ու միջակը, արդ իւնաբերութիւնը, առեւտուրը և վարկը։ Կոռպերացիան ոչ միայն առեւտուր է, կոռպերատիւ կամ ընկերային առեւտուր,

նաև արտադրութիւն է, նաև վարկ է: Դիւղացին կարօտ է նաւթի, հագուստեղնի և աղի. եթէ այս երեք բանը մատակարարութ նրան, գիւղացին երջանիկ կը զգայ իրեն: Մասնաւոր առեւտուրը ճնշիչ է: Մնում է պետական կոռպերատիւ. առեւտուրը: Արանք էլ յաճախ վարակւում են առաջինից նրա վատ փորձից: Կոռպերացիան, որպէս հասարակական ընկերացին օրիան, պէտք է նպաստէ գիւղացուն իր բարերար ապարատով մատուցանէ նրան էժանազին հագուստ, աղ ու նաւթ: Դրա համար ինքը կոռպերացիան պէտք է որ էժան ու ձկուն հիմնարկութիւն լինի:

Իսկ նրա էժանութիւնն ու ձկունութիւնը կախուած է նրա մասսայականութիւնից: Մասսայական կոռպերացիան գիւղի վսաւհութեանը կոթնած մարմին է. Այդ վսաւհութիւնը ձեռք է բերում անդուլ, անձնուէր և հաւատարիմ աշխատանքով: Դա նշանակում է, որ կոռպերացիան ցոյց է տալու գիւղացուն իր պիտանի, գործնական դէմքը: Եւ այդ ոչ միայն առեւտրի առ գիւղացուն իր պիտանի, գործնական դէմքը: Եւ այդ ոչ միայն առեւտրի առ գիւղացուն մէջ կամ գիւղական արդիւնապարիզում. այլ աւելի շուտ արտադրութեան մէջ կամ գիւղական արդիւնաբերութեանը արւող անմիջական օգնութեան դէպում: Եթէ կոռպերացիան փառակով ու օրինակով ապացուցանէ գիւղացուն, որ նա նորանոր ուղիներ է բաց անում գիւղատնտեսութեան առաջ, այն ժամանակ կոռպերացիայի գործը գիւղում միանգամայն ապահոված է:

Կոռպերատիւ վարուցանքը, կոռպերատիւ աշխատանքը դաշտում, կոռպերատիւ վարեն ու կոռպերատիւների միջոցով ստացուած էժանապին գործիքներն, այս ամէնը կազմում է գիւղական կոռպերացիայի նիւթական արմատը: Գիւղացուն չի կարելի կոմմունիտ դարձնել հրահանգներով. գիւղացին չի լինի կոմմունիտ սոսկ ապիտացիայի միջոցով: Գիւղացին կապւած է բնութեանը, վերջնին նման նա փաստ, առարկայ ու նիւթ է սիրում: Կոմմունիտական բարով գիւղում պէտք է լինի իր սկան, նիւթական, փաստական: Գիւղական բարով գիւղում պէտք է լինի իր սկան, նիւթական գաղտնական ամամայնքը, չի ստեղծուի լուկ բարի ցանկութեամբ կամ գեղեցիկ լուսամուսան, կամ միամայնք և միասին տնտեսենք ու սպասենք»: Գիւղացին յուետես է և դիտող: Կա՞յ մեղանում կոռպերացիա: Թող նա փորձում դաշտում ցոյց տայ գիւղացուն, որ կոռպերատիւ աշխատանքն ու անտեսաթիւնը առելի ձեռնոտու է քան մասնաւորը: Մի լաւ ու գործնական օրինասաթեանը առելի ձեռնոտու է քան մասնաւորը: Այդ գերը վերապահւած է կոռպերացիային: Միմիայն այդ դէպում նա կը լինի իսկապէս կրթիչ ու կուլտուրական գործօն մեր գիւղում:

Մասնաւոր առեւտրին, սպեկուլացիային կուլ յայտարարով ու աշխատաւոր տարրին, էժան գներով առեւտուր անող կոռպերատիվների և գիւղի, գիւղատնտեսութեան ծախքերը թեթեւացնող ու գործով գիւղացու համայնավարութեան պատրաստով կոռպերացիայի գումարը՝ դա ինքը սօցիալիզմն է, որ սկսել է քաղել ու շինել արդի գիւղերը, մեր դաշտերն ու տափարակները:

ԿՈՄՄՈՒՆԻՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Կոմմունիտական երիտասարդութիւն: Նա գիւղի ողջ ապագան է: Գիւղի անցեալը յարոնի է: Նրա ներկան աննախանձելի է: Մնացել են նի հետեւանքներն ու բեկորները: Ներկան խկացէս ասած չկայ: Գիւղի յատկանիշն կողմն է անցեալով փարուիլ կապիտալին, ապագայում՝ աշխատանքին, ներկան դատարկ է, ամայացած: Այդ բացը լեցնում է Խորհրդացին իշխանութիւնը. նրա անդուլ ջանքերը մի նախակ ունին, բարեկաւել գիւղը և պատրաստել նրան յանուն ապագայի: Ինչպիսի՞ նիւթ կայ գիւղում այդ աշխատանքը տանելու համար: Կինը տակաւին քնած է: Տարիքաւոր տղամարդը յաճախ ենթակայ է ծերերին կամ դնում է ծերերի մանապարհով: Ծերերն անցեալի բեկորներն են: Կան երիտասարդները: Նրանք են, որ կերպարանափոխելու են այսօրւայ գիւղը: Երեք, հինգ ու տասը տարի, և գիւղի ամբողջ անձնական կազմը բաղկացած կը լինի այսօրւայ երիտասարդութիւնից:

Ախալքալաքի գաւառի գիւղերից է հայկական Սուլան, որ ունի 272 տուն: Գիւղի ամենակրթուած «առաջնակրտք» ու ձեռներէց անձնն է ներմասեանաւարտ ալեղարդ ֆարմանեանը: Նա գիւղական հասարակութեան այծն է: Գիւղը նրա բերնովն է խոսում: Ֆարմանեան շատ պահանջկոտ է: Գիւղում ամենայն ինչ վատ է, ոչինչ չկայ և ֆարմանեանի շրթունքներից պահանջներ, պահանջներ ու պահանջներ է, որ թափուում են ֆարմանեանը խկապէս անդաւական է և խորհուրդներից: Նա վարժապետ է: Հարկաւ, նա դաշնակ է, միշտ վրդովուող ու խառնակիչ: Ի՞նչ բարերար ազգեցութիւն կարող է ունենալ այդ մարդը գիւղի վրայ. Երբ բացատրում ես գիւղացիներին, թէ բանը ինչումն է, ֆարմանեանը խոկոյն եեթ պահանջում է: Պիտք է հայ գիւղի ազատել ֆարմանեաներից և դա մեր Կոմմունիտ պարտականութիւնն է: Ինչպէ՞ս:

Կոմմունիտական երիտասարդութիւնը գիւղում պիտի լինի յեղաշրջիչ ոյժ և այս ձեռով: Գիւղում պէտք չէ իշխանաւոր կոմսումող, հրամայող, կոռպավարող և իշխանութիւն անող կոմսումող, ոչ էլ ենք սկսյ, պասախիլ կոմսումող: Գիւղում կայ և մնում է Խորհրդացին իշխանութիւնը. Կոմսումողն օժանդակում է նրան: Նա կազմակերպում է երիտասարդներին, ընտելացնում է նըրանց ինքնուրոյն ձեռնարկութեան, ինքնովնութեան. գուրս է բերում նըրանց քահանայի, վարժապետի, ալեւորի, ուկսի, խանութպանի ու նահապետի ազգեցութիւնից: Հողագործական, լուսաւորութեան և կոպերատիւ աշխատանքների ասպարիզում կոմսումողն իր հերթին վարժեցնում է երիտասարդ խաւերին, Յախապարասում և նրանց գիւղը վերանելու նորի՝ ժամանակակիցից խորհրդացին, սոցիալական հիմունքներին կոթնած նոր գիւղի: Հին սերունդը գտուարտնում է այդ անել: Դա նոր սերնդի և հինգ գուրս եկած լաւագոյնների գործն է: Ահա այսպիսի մի մեծ կուլտուրական աշխատանքի գիւղաց է կանգնած ժամանակակից գիւղական երիտասարդութիւնը: Այս ամէնը կատարում է և պիտի կատարուի Հայաստանում: Որքան էլ զայրանան, չարախօ-

ու ու ծիծաղեն թշնամիները մեր կոմմունիստական երիտասարդութեան վրայ, մեր աշխատանքի զիմաց գիւղում, որքան էլ նրանք պրովկացին լուրեր տորածեն կրօնի վերաբերեալ մեր քաղաքականութեան առիթով, ինչ սուտեր էլ յօրինեն նրանք հայ գիւղացու տրամադրութեան մասին, գիւղի յեղափոխական աշխատաւորութիւնը կը գնայ իր ուղիով: Նա հրաժարում է վարժապետներից, տէրտէրնիրից ու խմբապետներից: Նա ձգում է կուլտուրայի, բարեկեցութեան և Խորհրդային կարգերի ամրացման: Այդպէս էլ կը լինի:

Այժմ նայնք քաղաքին:

Քաղաքի բանուորութեան և աշխատաւորութիւն դրութեան բարելաւումը առաջ է գնում աւելի նպաստաւոր պայմաններում: Սրան վերաբերող առեւելիները յայտնի են: Այդ առիթով շատ է դրուած, ուստի կարիք չկայ նրա վրայ ծանրանալու: Սրժէ միայն մի քանի խօսք նուիրել որբերին ու որբանոցներին, կուլտուրական հիմնարկութիւններին, հայ լեզուի ու գիտութեան արդի վիճակին և մտաւորականութեան:

ՈՐԲԵՐԸ

Հնդհանրապէս մեր երիտասարդութեան և մասնաւորապէս պատահնեկութեան խնդիրները յարակից են, աւելի շատ միացած են որբերի հարցին: Հայաստանը որոշ խմաստով որբերի երկիր է: Տասնեակ հազարներով որբեր են սընւում ու գաստիարակւում այնուեղ, հազարներով որբեր են պահում և արտասահմանում: Սակայն ինչ մեծ տարբերութիւն կայ այդ երկու հատուածների գրութեան մէջ: Այս տարուայ Յունիսի 22 թուազրով Յունաստանի հայ որբերը «Տառապով որբութիւն» սոսրագրութեամբ մի գրութիւն են բաց թողել՝ «Որբերու կոչ ընդհանուր հայութեան ձգնաժամը հասած է», որտեղ ասուած է: «ԱՄՈՐ նամակներէ քաղուած տեղեկութեանց համաձայն, այլ և ալլ կղզիներու հայ որբուհները 14էն վեր սկսած են Յոյներուն ծառայութեան տալ: Ահաւասիկ տիտոր և ցնցով պարագայ մը ես, որ մեզ ալ զայրացում կը պատճառէ: Պահ մը ենթադրենք թէ մենք որբերս տանիլ կրնանք ըլլալ ամենէն յուսահատական վարկեաններն իսկ, բայց երբեք չէլնք յուսար, թէ որբուհներն ալ մեզի բախտակիցներ պիտի ըլլային: Ողբի նամակներ են անոնք, զորս զրած են մեզի այդ տարաբախտ որբուհները, աղերսելով ազատութիւն միայն:» Գրուածքում նկարագրուած է որբերի ծանր գրութիւնը որբանոցներում. վերջում կցած է՝ «Անհանդուրմելի է այլ ես, պէտք է փըրկել որբերը, փրկել որբուհները, անոնցմէ պիտի կազմուի ապագայ հայ սերունդը: Ահա վերջին կոչը կ'ուզուի ամբողջ հայ ազգին քանի զեռ չինք գլորուած անդունդը: Հայցուցէք ձեր ձեռքերը և փրկեցէք մեզ անդունդի եղբէն»: Միանգամայն պարզ և հասկանալի է այդ պատկերը գաղութներում ու բուրժուական երկիրներում: Այժմ լսենք Հայաստանի որբերի ձայնը:

Հայաստանի որբերի փոքրիկ մասն է միայն մնաւմ պետական որբանոցներում, որոնց գրութիւնը նիւթականի ու գաստիարակութեան տեսակէտից

բաւրար է: Խոշորագոյն մասը գտնուում է ամերիկական որբանոցներում: Վերջիններս իդէականի կողմից գտնուում են Խորհրդային իշխանութեան լիակատար հակողութեան ներքոյ: Արդէն այդ որբանոցների համար երկրագործական համայնավայրեր են սուելծուում: Ամերիկական որբանոցների բնդհանուր վերահսկիչ է. Եարբոյի Ամերիկայի եւրոպական ներկայացուցչին (Զուգերիայում) այս տարւայ սեպտեմբերին ուղղած նամակում, ի միջի այլոց, ասուած է: «Կառավարութիւնը (արդի Հայաստանի Ա. Մ.) յացել է մի քանի սքանչելի ծրագիր հողերի ուոգման վերաբերեալ, մի քանիսն արդէն իրագործուում են, իսկ միւսները, որոնց յաշողութիւնն անպայման է, միջոցների սղութեան պատճառով յետաձգւում են: Կառավարութիւնը յանձնել է ամերիկական կոմիտէին որոշ քանակով հող, որը կառավարութեան հակողութեան տակ պիտի բաժնուի որբերին: Այլ երկիրներից Հայաստան տեղափոխուելիք երեխաների հարցը միանգամայն այլ կերպ է զըրուած, քանի որ նրանք ոչ թէ միայն ապահովուած են լինելու նիւթականապէս, այլ և անհրաժեշտ է ունենալ միջոցներ հողի մշակութեան համար, որոնք պէտք է յատկացուին որբերին: Այսակեղ խօսքը վերաբերում է արտասահմանից Հայաստան փոխադրուելիք որբերին: Խոչպէս յայտնի է, միայնի կողմից այսօր շատ է զրադեցնում հայկական մի քանի գաղութներին: Այժմ լսենք Հայաստանի որբերի ձայնը:



Թ. ՄԱԿԻՆՑԵԱՆ

(Նախկին Կրթական նախարար)

յայտնի է, այդ խոդիրն այսօր շատ է զրադեցնում հայկական մի քանի գաղութներին: Այդպէս ուրեմն, ամերիկացին լսու է ըմբոնել, որ խորհրդային իշխանութիւնը որբերին ցանկանում է դարձնել հողագործ, արհեստաւոր ու գործունեայ քաղաքացիներ:



Այդ ուղղութեամբ է տարւում աշխատանքն ամերիկական որբանոցներում։ Անշուշտ, այստեղ մի՞նչորաը գեռ եւս այն չէ, ինչ մենք տեսնում ենք խորհրդային որբանոցներում։ Եւ այս հարցն է որ մեզ անհանգըստացնում է;

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔՈՒՄ

Պէտք է կրթել մօտ երեք տասնեակ հազար երեխաներ : Նրանք մեր յօյսն են, մեր պետութեան հիմքերից մէկը: Դա կոմսոմոլիսական խնդիրն է քաղաքում: Զէ՞ որ մեզ հարկաւոր են սոցիալիստ քաղաքացիներ, հալալ աշխատաւորներ և ոչ թէ ազգայնական ու կղերական սեմինարիսաններ և հակայեղափոխական գիմնազիատներ: Տուար բռնել ենք և պահում ենք, պէտք է որ զիծն էլ լաւ ու կարգին տանենք: Դա մեր կուսաւորութեան կոմիսարիատի գործն է ամենից առաջ, երիտասարդութեանը էապէս և կուսակցութեանը վերջն հաշուով:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ


Հայաստանի քաղաքներն ունեն իրենց մի շարք կուլտուրական գործուները՝ լրագրեր, գիրք, թատրոն, թանգարան, գրադարան, կոնսերվատորիա, համալսարան և այլն։ Ոչ մի ժամանակ Հայը այդպիսի պատկեր չի տեսել։ Առանց տատանուելու պէտք է ասած, որ Հայաստանը մշակոյթի նոր դարաշրջան է ապրում։ Հայ լեզուն այսօր մեծ յարդ ունի։ Նա լւում և գործածում է ինչպէս կուլտուրական հիմնարկութիւններում, պետական օրգաններում, նոյնպէս և տանը, փողոցներում։ Դաշնակցական իշխանութիւնն ի՞նչ լեզու է գործածելիս եղել։ Դժուար է ասել։ Դաշնակցականները հայ լեզուի տարածման ու զարգացման օգտին չեն աշխատել, մինչդեռ մեր այդ լեզուն յարմարում է և գործնականին, և տեխնիկային, և գիտութեանը։ Նորագոյն, գիտական և բժշկական հայ բառարաններ են տպագրուում։ Առաջնուրը եղել են միթէ քիմիայի, մարդակաղմութեան, ախտաբանութեան, համբարանութեան և այլն հայերէն գ ասադրքեր ու համալսարանական դասընթացքներ։ Այսօր գալրականութիւն է։

Աեզտուի հետ միասին զարդանումք է և գիտութիւնը։ Հայկական գիւտութեան մասին չենք խօսում։ Հայերէն գիտութիւնն է, որ այսօր ծաղկում է Հայաստանում իսկ այդ գիտութեան արդիւնքներն կը ստացուեն ապագա։ յում։ Հայաստանը ունի և գիտութեան տաճար։ Դա Երեւանի պետական համալսարանն է, որ հազարի մօտ ուսանողաթիւն ունի և եօթանասունի մօտ գիտնական ուսուցիչներ է համախմբել իր շուրջը։ Մենք արդէն շեշտեցինք, որ մշակոյթի բարիքները պէտք է տարածել գիւղում, պէտք չէ միայն ուգեւորուել ու տարածել քաղաքի մշակոյթով։ Այս, ինչ որ կայ, դա էլ արդէն բաւական է։ Եղած թանգարաններն ու գրականութիւնը պէտք է լայն կերպով օգտագործել գիւղում և գիւղի համար։ Մեր առօրեայ մամուլը խսիր

կերպով պէտք է տարածել գիւղում. դրա համար անհրաժեշտ է կանոնաւութեան վայրացում, երթեւեկութիւնը և թերեւս կարեւոր է գրական շրջիկների ինստիտուտ մացնել Հայաստանում: Յամենայն դեպս այս խուռա հարցը պէտք է թիւառա մացնել Հայաստանում: Սա ժողովրդական կուսաւորութեան կապել գրագիտութեան տարածման խնդրին: Սա ժողովրդական կուսաւորութեան գործն է: Դթէ թերթն ու գիրքը ժողովրդական լայն մասսա-կոմիսարիատի գործն է: Դթէ թերթն ու գիրքը ժողովրդական լայն մասսա-կոմիսարիատի գործն է:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Սակայն մեր կուլտուրայի կենսունն է կազմելու պետական համալսարանը Երևանում: Նրա համար միջոցներ պետք չեն խնայել, ինչպէս և գրա-



ՀԵՐԱԿԻ ԶՐԱՆՑՔԻ ԹԻՒՆԵԼԻՆ ՄՈՒՏՔԸ

սարանն այդ սիրան է : Նա չափանիշն է լինելու հայկական կուլտուրայի նրա մշակոյթի և նրանց կանոնաւոր զարգացման : Համալսարանը կը ստեղծի նոր ինստիլյուտնեցիա բառին իսկական խմաստով . նա կ'ինտելիգենտացնի ամբողջ

երկիրը: Իսկ առանց այս հանգամանքի կը դժուարանայ, նոյն իսկ անկարելի կը դաւնայ սօցիալիստական կարդերի զարգացումը, չե՞ որ սոցիալիզմը մի ամբողջ, մի նոր, մի կատարեալ կուլտուրայ է:

ՄՏԱԿՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նման հին ու նոր գիւղի՝ կայ և հին ու նոր ինտելիգենցիա: Հին ինտելիգենցիա է տէրտէրը, վարժապետը, գաշնակցական մասուրականը, աղգայնական գրականագէտը: Նրա դարն անդարձ անցել ու գնացել է: Գալուստ սարկաւագներն, Աղալեանները, Վարանդեաններն ու Քալանթարներն այլևս չկան: Նորն է գալիս, նորն է արշաւում: Դա երիտասարդ «Մուրճ»ն է և յեղափոխական: Զարենցը, դա նոր կուլտուրայի պահապան Մոռաւեանն է, մեր գիտնականներ ու գրականագէտներ՝ Ա. Յովհաննիսեան, Կարինեան, Յ. Յովհաննիսեան և ուրիշներն են: Մեզ հետ են և հին ինտելիգենցիայի լաւագսին տարրերը: Սրանք են, որ կոթնած մասաններին, նրանց անյօդսով կամքին, նրանց հետ միասին նոր երգ են ասում, նոր ձեւով հող են մշակում, նոր աշխարհ են շինում:

Սա է Հայաստանի ներկան: Սրանք են նրա գործերը: Այսպիսի տուեալներով է առաջ գնում:

Երեք տարի: Արար աշխարհի առաջ բաց է այդ տարիների կեանքը: Կան այնտեղ և սիսակներ: Հայաստանի բանուրներն ու գիւղացիները նկատում են այդ սիսակները և ըստ այնմ ուղղում գիծը և գործին առողջ ընթացք տալիս: Յամենայն դէպս մեր աշխատաւորութեան մահացու թշնամիներն և երկրից վտարուածներին չէ վերապահուած այդ մասին խօսելու: Նըրանց կանչն ու աղաղակը մեզ չեն վրդովում: Հայ աշխատաւորութիւնը կը գնայ իր ընտրած ուղիով:

Այսօր մենք ունենք Խորհրդային Հայաստան: Նրա կամակատարն է արդի կառավարութիւնը: Յեղափոխական հայ պետութիւնը դա մի ամբողջ դարագլուխ է: Մարդիկ արտասահմանում զրախօսում են, թէ չկայ հայկական անկախութիւնը, իսկ իրականութիւնը յամառօրէն պիտում է, որ արդի Հայաստանն ազգային խորհրդային պետութիւն է, ինքնուրոյն պետութիւն, հայկական լեզուով, հայ մշակովով զարգացող և հայի կեանքն աղնուացընդ մի պետութիւն:

ԵՐԵՔ ՏԱՐԻ

Երեք աարի է ահա, ինչ նա կանգուն, անխախտ ու խրստ նայում է ապագային, ձեռքում բռնած պրոետարական զեկը, իր յաղթութիւնները շալակին և պատրաստ նորանոր կոխների ու նուռածումների: Դաշնակցական Հայաստանը հնի, կապիտալիզմի, ցարական կարգերի շարունակութիւնն էր կազմում: Խորհրդային Հայաստանը նոր աշխարհ է, չտեմնուած ու չեղած:

Նախկին Հայաստանը զիսկ էր և մոխիր գարձաւ Յեղափոխական Հայաստանը կեանք է և յառաջդիմութիւն: Թող պահանողականները, սեւամիտներն ու ոճագործ սպասաւորները, թրե գալով մեռնող Եւրոպայի սրճարաններում, խռպոտ ունոցով գիմաւորեն Հայաստանի նոր կեանքը: Նա կայ, նա զարգանում է կոմմոնիստական կուսակցութեան զեկավարութեամբ, նա ամուր քայլերավ գնում է դէպի լուսաւոր ապագան: Որովհետեւ այդպէս են ուղում հայ բանուարն ու աշխատաւոր գիւղացին: Դա նրանց գործն է:

Ողջո՞յն յեղափոխական պրոլետարիատին:

Ողջո՞յն երեք տարին բոլորով սոցիալիստական Հայաստանին:

Ա. ՄԱՐՏՈՒՆԻ



ՍՈՑԻԱԼԻՍՏ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՖԷՏԵՐԱԿԱՌՈՆԻ ՆՈՐ ԿՆԻՔԸ

Պատկի երկու կողմերուն վեայ եղած գրութիւնները կը պարունակեն ՊԲՈՒ-ՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ, ՄԻԱՅՆԻ խօսք՝ վեց տարբեր լեզուներով — Ռուսերեն, Աւգրաներեն, Սպիտակ ուսերեն, Վրացերեն, Հայերեն եւ Թարարերեն:

ՃԻՐԱԿԻ ԶՐԱՆՑՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Աղեքսանտրապոլի շրջակայքի հարթավայրը հնում յայտնի է եղել, իբրև ամենապտղաբեր հողամաս, և այդ տեղերի հացը համարուել է ամենաշըսը: Հին Շիրակը համարուել է հայի չափաբանն, բայց ժամանակի ընթացւաւը: Հին Շիրակը համարուել է հայի չափաբանն, բայց ժամանակի ընթացւաւը: Հին Շիրակը համարուել է հայի չափաբանն, բայց ժամանակի ընթացւաւը:


Շիրակի ջրանցքով մենք հնարաւորութիւն ունենք. սազելու 15,000
տես. հող. այս չափի հողն, ի նկատի առնելով ջրանցքի ջրի քանակը, կա-
րելի է բաժնել ըստ բուսական մշակոյթների հետեւեալ կերպով. — 1) հացա-
հատիկի համար՝ 6400 տես., 2) բանջարանցների՝ 4500 տես., 3) այլիների՝
1000 տես., 4) մարգագետինների և խոտհարքի՝ 1300 դես. և հանգստի՝
2550 տեսիատին:

Եթէ մօտաւոր կերպով հաշուելու լինենք, թէ այդ հողերը ջրելուց յետոյ, ինչպիսի տնտեսական օգուտ կը ստացուի, կը գանք հետեւեալ եղաւ կացութեան : Հարկ եղած ձեւով մշակելուց յետոյ, ջրած հողին իւրաքանչիւր տեսիատինը կուտայ միջին հաշով 40 փութ աւելի հացանատիկ, քան նա այժմս տալիս է .ուրեմն 6400 տես.ը կուտայ լրացուցիչ $40 \times 6400 = 256,000$ փութ, որը եթէ դարձնելու լինենք սոկու հաշով ամէն մի փութ հացանատիկը 50 կոտէկ, կը ստանանք 128,000 բուռլի: Այսուհետեւ բանջարանոցի տիկը 50 կոտէկ, կը ստանանք 375,000 բուռլի: Այսուհետեւ բանջարեներ, կը տայ տարեկան ոչ պակաս քան 250 բուռլի մաս և այլ բանջարեղիններ, կը տայ տարեկան ոչ պակաս քան 250 բուռլի մաս արդիւնք .ուրեմն 1500 տեսիատինէն կը ստանանք 375,000 բուռլի: Քուր արդիւնք .եթէ հաշուելու շինենք այդիները, սրճոցից օգուտ կը ստացուի Այսպիսով, եթէ հաշուելու շինենք այդիները, սրճոցից օգուտ կը ստացուի միայն մի քանի տարուց յետոյ, նոյնպէս և մարդագետինները, Շիրակի դաշտավայրի սողումը կարող է տալ տարեկան $375,000 + 128,000 = 503,000$ բ. մարտուր արդիւնք :

Բայց ջրանցքի նշանակութիւնը, ինչպէս տեսանք, միայն սովորածով Բայց ջրանցքի նշանակութիւնը, ինչպէս տեսանք, միայն սովորածով

1. Նախապատրաստական աշխատանքների՝ 13,782 բուրլի:
2. Ժամանակաւոր բնակարաններ՝ բանուորների և ծառայողների
համար՝ 18,505 ր.:

3. Տօնէլների աշխատանքների համար զանազան իրեղէնների ձեռք
բերելը և կահաւորումը՝ (այստեղ մտնում են նաև փորիչ մեքենաները) 37
հազար 702 ր.: 4. Տօնէլի և բաց փորուածքների փորելը՝ 228,530 ր.:
5. Տօնէլների ամրացում, նրանց վերջնական ձև տալը՝ 199,480 ր.:
6. Գլխաւոր մասի կառուցումը՝ 41,332 ր.:
7. Հողային աշխատանքներ՝ 44863 ր.:
8. Արհեստական կառուցուածքներ՝ 90,929 ր.:
9. Բնդէ. ծախսեր՝ 74,877 ր.: Բնդամէնը՝ 750,000 լուրդի:



ԱՄՐԱՐՏԱԿԻ ՇԽՆՈՒԹԵԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԱՐԴՅՈՒՆՎԱՐ ՄՐԱԿԱՆ ԽԵՆՔՆԵՐԸ
Այս գումարը հարկաւոր է մինչև Օրթաքիլիսա աշխատանքները կատարելու համար: Եթէ հաշուելու լինենք, որ մինչև իլիսիաբի աշխատանքները շարունակելու և բաշխման ցանցն անցկացնելու համար մօտաւորապէս նրբը շարունակելու և բաշխման ցանցն անցկացնելու համար կը լինի 250,000 ր.՝ ուրեմն բոլորը միասին 1,000,000 ր.:
Հարկաւոր կը լինի 300,000 բուրլի:
Մինչև այժմս ծախսուած է մօտաւորապէս 300,000 բուրլի:

Ի՞նչ կատարում է Մինչեւ ՀԻՄԱ

4. Ամբարտակի աշխատանքներից վերջացրած է գետի աջ ափը 22
սաժէն տոննէլի և գետի լայնութեամբ ժամանակաւոր պատնէշի (գամբա) կա-
ռուցումը գետի հոսանքի լոնթացքը փոխելու համար։ Այժմս գետը հոսում է
ժամանակաւորապէս յիշեալ տոննէլի միջոց։ Փառուած է և տարրուած ամբար-



տակի երկու երրորդ մասը, կատարուած է ամբարտակի շիռուղների մաքուր աշխատանք 31 խոր. սաժէն, պատրաստուած է հարկ եղած քանակութեամբ զանազան նիւթեր ամբարտակի ապագայ աշխատանքների համար և կատարուած այլ մանր աշխատանքներ : Բնդհանուր տոմար այս մասում կատարուած է զանազան աշխատանքներ 300 խ. ս. :

2. Փորուած է բոլոր տոններներում 750 սաժէն տարածութիւն : Վերջնականապէս պատրաստ է, ամբացրած մաքուր քարերով 226 սաժ. տոննելը, սկսուած է նոյնավախ աշխատանքներ զիսաւոր տոննելի արտէն փորուած մասերում . այս նպատակի համար պատրաստուած են և պատրաստուած են հարկաւոր նիւթեր ինչպէս են քար, տաղ և այլն :

Երկու շախատաներից մէկն արդէն աւարտած է, իսկ միւսը փորուած է 24 սաժ., մնում է 3 սաժէն :

3. Բաց փորուածքային աշխատանքներ ջրանցքի գլխաւոր գծում կատարուած է 4 վերստ տարածութեան վրայ և մօտ ապագայում այս մասը կը լինի բոլորովին պատրաստ : Մինչեւ Օրթաքիլիսա գիւղը մնում է կատարել 3 ու կէս վերստ տարածութեան աշխատանքներ :

Այս մասում կատարուած է աշխատանք քարի մէջ 600 խ. ս., զանազան հողի շերտերի մէջ 2000 խ. ս. :

4. Կառուցուած է կամուրջ ջրանցքի գլխաւոր գծի վրայ, նրա այն մասում, որտեղ նա կտրում է քաղաքից կազմ գիւղը տանող ճանապարհը, գլխաւոր գծի չորրորդ գծի վրայ :

5. Տարուած են 2 փորիչ մեքենաներ :

6. Փորուում են և մօտ ապագայում պատրաստ կը լինեն լեռնային փոքրիկ ջրանցքներ, պաշտպանելու համար արդէն փորուած ջրանցքի գլխաւոր գիծը գարնանային ջրերի հեղեղումներից, նոյնպէս և կրծառելու արհետական կառուցուածքների քանակը :

7. Հանուում է յատակագիծը կազմ գիւղից մինչեւ Օրթաքիլիսա հարթավայրի բաշխման ցանցը, նպատակայարմար կերպով նախագիծն իրագործելու նպատակով :

8. Կառուցուած է մինչեւ 20 շէնք — բանուորների բնակարաններ, բաղնիք, հիւանդանոց, փորիչ մեքենաների շէնքեր, ակումբ, զանազան արհետանոցներ, ճաշարանի շէնք, ելեքտրական կայան և այլն :

9. Մի քանի օրից պատրաստ կը լինի 10 ուժանոց ելեքտրական կայան, որը կը մատակարարի լոյս թէ բանուորների բնակարանների և թէ տոննելների ու աշխատանքների միւս վայրերի համար :

10. Զանազան արհետանոցների և բանուորների քանակն այժմս հասնուում է մինչեւ 600 հոգու :

Ենթագրուում է ջուրը բաց թողնել Շիրակի դաշտավայրը 1924 թ. գարնանը : Այսպիսով Շիրակի ջրանցքի նախագծուած աշխատանքները մինչեւ Օրթաքիլիսա նոյն ժամանակին կը համարուի աւարտուած :

Ա. ՅՈՎԱԿԻՔԵՍԻՆ




ՀՀ Ազգային գրադարան

Յ. Յ.

ԳՐԱԴԱՐԱՆ

13-024



Շիրակի ջրանցքի ամբարտակի ռվանդական նախատեսած տէխատանբները



Այս գրեթեկին ամբողջ հասոյքը յատկացուած է
ի նաև Շիրակի ջրանցքին:

ՏՊԱԳՐՈՒԱԾ Է ՀԱԶԱՐ ՕՐԻՆԱԿ

ԳԻՆԸ 10 ԴԱՀ. ՈՂՋ

Կը խնդրուի առելքն առելի չվճարել: Անոնք որ կուզեն նպատել Շիրակի ջրանցքին բացման կրնան մեկ օրինակն առելի զնել եւ նուիրել որբանցներու եւ այլ նաև առաքեանց:

Այս գրեթե ստուգու համար դիմել՝ «Առեւք խմբագույքին» եւ կամ Սզբագույք Առամկալաւ Ազգայական ակադեմիանուն: